

ՄԱՅՍՒԹ-ՆՈՎԱՅԻ ԳՈՐԾԱԾԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ. Խ. ՆԱՐՑԱՆ

Սայաթնոյ վագիտութիւնը հանճարեղ բանաստեղծի ստեղծագործութեան զրականագիտական-բանասիրական մեկնաբանութեան գործում զգալի հաջողութիւնների է հասել: Վերջին տարիներու հատուկ քննութեան նյութ է դարձել Սայաթ-Նովայի սիրո և արվեստի փիլիսոփայութիւնը: Սակայն դեռ շատ անելիքներ կան. առայժմ քիչ չեն երգչի խաղերի մութ ու վիճելի կետերը, որոնցից մի քանիսի լուսաբանութեանն են նվիրված ներքոհիշյալ քննութիւնները:

Էշխըտ քիզի նա ր դ ի ս արի

Ի՞նչ է նշանակում նարդ բառը, որ գտնում ենք երգչի «նոսկիրըտ մալում իմ արի» խաղում¹.

Սիրտըս փուրումըս սպանեցիր, էշխըտ քիզի նարդ իս արի:

Գ. Ախվերդեանը նարդ բառը չի մեկնել²: Գ. Լեոնյանը մեզ հետաքրքրող բառը բացատրել է. «նարդ (ներդ)—բախտի խաղ»³: Ռ. Աբրահամյանը փորձել է առարկայացնել մեկնաբանութիւնը. «նարդ (ներդ) նարդի (կամ նարդ) խաղը»⁴: Մ. Հասրաթեանը մի փոքր առաջ է ընթացել. «նարդ—նարդի խաղ (») նա ր դ ե անել (պարսկ.) վանդակապատել. «էշխըտ քիզի նա ր դ ի ս արի»— սերդ քեզ համար խաղալիք ես դարձրել կամ վանդակ ես դարձրել, կամ, կրակ (ար. նար, Դ-ի հավել.—քո»⁵: Ա. Քոչոյանը կրկնել է նախորդներին. «նարդ (պարսկ.) նարդու խաղատախտակ: նարդ անիլ—վանդակապատել, փակել»⁶:

Կարծում ենք, որ նարդ բառը կապվում է ժողովրդական մի գեղեցիկ խաղի հետ, որի անգրադարձումը գտնում ենք Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը» պոեմում: Բոստեմյան թագավորը և Ավթանդիլը որսի ժամանակ սպանում են երկու հազար քսան գազան. Ավթանդիլը սպանում է արքայից քսանով ավելի, նրա ոչ մի նետը չի վրիպում: Երբ ճորտերն այս մասին թագավորին պատմեցին.

1 Սայաթ-Նովա, հայերեն, վրացերեն, աղբյուրներն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ ո Ր Ո Ս Ա հ ա ս Ր ա թ յ ա ն, Երևան, 1963, էջ 25 (այսուհետև՝ «Սայաթ-Նովա, 1963»):

2 Սայաթ-Նովա, լուս զցած աշխատասիրութենով Գ ե ո Ր գ ե ա յ Ա խ վ ե ղ ե ան, Մոսկովա, 1852, էջ 76 (այսուհետև՝ «Սայաթ-Նովա, 1852»):

3 Սայաթ-Նովա, հայերեն խաղերի լիակատար ժողովածու, կազմեց և ծանոթագրեց Գ ա Ր Ե գ ի ն Լ և ո ն յ ա ն ր, Երևան, 1932, էջ 186 (այսուհետև՝ «Սայաթ-Նովա, 1932»):

4 Սայաթ-Նովայի տաղերը, ներածութեամբ, կենսագրութեամբ, բանասիրական և լեզվաբանական ուսումնասիրութեամբ Ռ. Ա բ Ր ա հ ա մ յ ա ն ի, Թեհրան, 1943, էջ 180 (այսուհետև՝ «Սայաթ-Նովա, 1943»):

5 Սայաթ-Նովա, 1963, էջ 304:

6 Ա. Կ. Ք ո շ յ ա ն, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Երևան, 1963, էջ 141:

Պատմաժողովը այս թագավորին թվաց ինչպես նարդի մի խաղ⁷:

Գ. Ասատուրը «Վազրենավորի» իր թարգմանությունը կցած «Բնագրիչ նույնությունները մտցրած բառերի և անունների ցուցակում» նարդ բառը մեկնել է այսպես. «Նարդ—պայքարախաղի գործիք է, նարդ»⁸:

Սայաթ-Նովան այդ նարդն է նկատի ունեցել և դրանով կյանք ու իմաստ, շունչ ու աշխուժություն է մտցրել իր ստեղծած գեղարվեստական պատկերի մեջ:

Լուսնասարդ, փուզուլ սրպանող

Լուսնաստղը, որ հայտնի է նաև Արոսյակ, Լուսաբեր, Վեներա անուններով, դարձել է ժողովուրդների խոսք ու զրույցի, առասպել-ավանդության առարկա:

Լուսնաստղի հետ կապված ավանդությունները, Լուսնաստղը, փրբե անհասանելի գեղեցկություն, գտնում ենք նաև Սայաթ-Նովայի տաղերում: «Աչկ ու ունքըտ վեր իս թողի» խաղում⁹ բանաստեղծը սիրուհուն երգում է մասնավորապես հետևյալ համեմատությունով.

Խոսկրս առակով իմացի, Լուսնասարդ, փուզուլ սրպանող:

Գ. Լևոնյանը¹⁰, Մ. Հասրաթյանը¹¹, Ա. Քոչոյանը¹² և ուրիշներ կարծել են թե փուզուլը փուռն է՝ մառախուղը, մեզը, մուժը, վաղորդյան թեթև մառախուղը, մշուշը, գտնելով, որ երգիչը փուռ բառը փուզուլ է դարձրել հանգ ու վանկի համար: Ուրեմն՝ «փուզուլ սրպանող» նշանակում է մշուշը սպանող—մշուշը ցրող: Ռ. Աբրահամյանը փուզուլ բառը մեկնաբանել է իբրև արաբերեն ֆուզուլ, որը միայն նշանակում է բանասարկու, քսուլ¹³: Այս մեկնաբանությունները համոզիչ չեն, քանի որ հաշվի չեն առնում խաղի ամբողջականությունը: Կարծում ենք, որ Սայաթ-Նովան սիրուհուն դիմելով «խոսկրս առակով իմացի», ուզում է ասել՝ հիշիր այն առակը, ավանդությունը, զրույցը: Իսկ թե ո՞րն է այդ առակը, պարզորեն գրում է՝ «Լուսնաստղը, փուզուլ սրպանող», այսինքն՝ Լուսնաստղի ու փուզուլի առակը կամ փուզուլ սպանող Լուսնաստղի առակը:

Արևելյան զրույցների համաձայն, Աստված ցանկանալով ստուգել իր նկատմամբ երկու հրեշտակների՝ Հարութի ու Մարութի տածած հավատարմությունը, նրանց երկնքից ուղարկեց երկիր և մի գեղեցկուհու միջոցով նրանց փորձության ենթարկեց, Երկուսն էլ սիրեցին գեղեցկուհուն, բայց վերջինս շփիրեց նրանց: Նա կանացի նազանքով հրեշտակներին խաբեց, նրանցից իմացավ երկինք բարձրանալու կախարդանքը և բարձրանալով այնտեղ՝ դարձավ Լուսնաստղ:

Ահա այս Լուսնաստղն է, տր սպանում է փուզուլ, որ նշանակում է՝ հանիրավի, անգթորեն սպանում է հրեշտակային սերը: Այդպիսի մաքրամա-

7 Շոթա Ռուսթավելի, Վազրենավորը, թարգմանությամբ Գևորգ Ասատուրի, Երևան, 1937, էջ 14—15:

8 Նույն տեղում, էջ 256:

9 «Սայաթ-Նովա, 1963», էջ 64:

10 «Սայաթ-Նովա, 1932», էջ 189:

11 «Սայաթ-Նովա, 1963», էջ 319:

12 Ա. Քոչոյան, Նշվ. աշխ., էջ 188:

13 «Սայաթ-Նովա, 1943», էջ 191:

քուր սիրով է երգելը սիրել սիրուհուն, սակայն վերջինս նրա սերը ոտնատակ է տվել այնպես, ինչպես Լուսնաստղը՝ Հարութի ու Մարութի սերը և մնացել սպանող, անմատչելի ու կախարդիչ:

Ի՞նչ է փուզուլը: Ըստ Ա. Քյուսիելյանի՝ այն նշանակում է «Առաքինութուն. գիտութուն. շնորհք. բարութուն, երախտիք»¹⁴: Այդ բոլորը տեսել-ստացել է գեղուհին, սպանել այդ բոլորը տվողների սերը ու բարձրացել երկինք: Իսկապես, երգիչն ասում է. Լուսնաստղի պես գեղեցիկ սիրուհիս, դու էլ նրա նման սպանում ես առաքինութունը, սերը: Նկատենք, որ ֆուզուլ բառը երգիչը փուզուլ է գրել, որովհետև թիֆլիսահայ բարբառը շունք ֆ տառ: Մ. Աբիգյանի կարծիքով՝ փուզուլը նաև նշանակում է «գոռոզ, ինքնահավան, հանիրավի, կեղեքիչ»¹⁵, իսկ ըստ Պ. Մաղազանիկի՝ «քմահաճ, հանիրավի»¹⁶: Ավելացնենք, որ փուզուլը սերում է արաբերեն ֆուտուլ բառից¹⁷ և ոչ մի կապ չունի թուրքերեն փուս՝ մեզ-մշուշ բառի հետ ու իր երանգներից մեկով՝ ինքնահավան, ինչպես նկատվել է, մտել է վանա բարբառի մեջ ֆուտուլ ձևով¹⁸:

Մովի պես ուրզան իմ տալիս

«Յիս մե զարիր բուլբուլի պես» խաղի¹⁹ վերոբերյալ տողում մեզ հետաքրքրողը ուրզան բառն է: Գ. Ախվերդյանը բառը գրել է հարցականով, հայերեն՝ ուրաղան և ֆրանսերեն՝ ուրագան²⁰: Մյուսները նրան կրկնել են և ուրագան բառը բացատրել՝ մրրիկ, փոթորիկ, ծովային ալեկոծություն և այլն: Միայն Ա. Քոչոյանն է փորձել տալ բառի աղբյուրը՝ «թուրքերեն»²¹: Այդ աղբյուրը անհամոզիչ է, քանի որ ոչ միայն խազի հորինման ժամանակ (1750-ական թվականներին), այլև ավելի քան 130 տարի անց լույս տեսած ֆրանս-թուրք-հայերեն ընդարձակ բառարանում²² չկա ուրաղան-ուրզան բառ: Ֆրանսերեն ուրաղանի դիմաց այդ բառարանում հայերեն գրված է ուռական, թուրքերեն՝ դայ. պորա²³: Քյուսիելյանի կազմած ընդարձակ թուրք-հայ-ֆրանսերեն բառարանում ուրզան բառը բացատրված է պարան, ճոպան²⁴: Մրրիկի համար Քյուսիելյանը օգտագործել է ֆուրթունա բառը, որի կողքին ֆրանսերեն գրել է ouragan—ուրագան²⁵: Աբիգյանի կազմած ընդարձակ բառարանում բացատրված է միայն ֆուրթունա բառը՝ փոթորիկ²⁶: Նույնիսկ Գ. Մա-

14 Ա. Քյուսիելյան, Երեքլեզվյան բառագիրք տաճկերեն—հայերեն—գաղղիերեն, ի Վիեննա, 1883, էջ 941:

15 Մ. Աբիգյան, Ընդարձակ բառարան տաճկերեն հայերեն, Կ. Պոլիս, 1892, էջ 430:

16 Д. Магазаник, Турецко-русский словарь, М., 1945, стр. 196:

17 «Արաբերեն—հայերեն բառարան», կազմողներ Ս. Ս. Չոբուչյան և Հ. Ս. Սարգիսյան, Պեյրուս, 1969, էջ 528:

18 Հ. Աճառյան, Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Մոսկվա—Վաղարշապատ, 1902, էջ 377:

19 «Սայաթ-Նովա, 1963», էջ 18:

20 «Սայաթ-Նովա, 1852», էջ 71:

21 Ա. Քոչոյան, Նշվ. աշխ., էջ 184:

22 Ս. Հեքիմյան, Ֆրանս-թուրք-հայերեն բառարան, Վիեննա, 1883:

23 Նույն տեղում, էջ 761:

24 Ա. Քյուսիելյան, Նշվ. աշխ., էջ 720:

25 Նույն տեղում, էջ 956:

26 Մ. Աբիգյան, Նշվ. աշխ., էջ 433:

զազանիկի թուրք-ոուսերեն ընդարձակ բառարանում ուրղան բառը նշանակում է միայն ճոպան²⁷, իսկ մրրիկ բառի համար կա ֆիրթինա բառը²⁸:

Մեր կարծիքով, բառն ունի միջինասիական ծագում, որտեղ գրվում է հենց ուրղան, որն ունի մի քանի նշանակություն՝ փքվել, ծփալ, կայծկլտալ: Ուրեմն՝ ծովի պես ուրղան տալ նշանակում է ալեկոծվել, բոցավառվել, ամպրոպվել՝ մի շատ բնորոշ կենդանի պատկեր՝ երգչի հոգու խռովքի և ցամառան արտահայտության համար²⁹:

Վունց ձևիլ գուզե, վունց կըտրիլ՝ կաբըս մունաթ չը քաշե

Այս տողը, որ բերված է «Գուզիմ՝ ումբըս հենց անց կացնիմ» խաղից³⁰, ունի իրական հող և վկայում է բանաստեղծի անզուգական արհեստաճանաչության և աշխարհաճանաչության մասին: Այդ է վկայում բանաստեղծության նախորդ տողը.

Մե բիռըն ենգիդունյա է, մե բիռըն՝ փաշայի խալաթ...

Կարծում ենք, որ «Վունց ձևիլ գուզե, վունց կըտրիլ՝ կաբըս մունաթ չը քաշե» ասելով Սայաթ-Նովան նկատի է ունեցել այնպիսի խալաթներ, որոնք հարկ չի եղել ձևել, կաբել և որոնք ամբողջովին գործված են դուրս եկել հաստոցներից: Եվ իրոք, տակավին XI դ. արաբական թիմնիս քաղաքում եղել են այդպիսի խալաթներ. «Թիմնիսի ջուհակների փառավոր գործքերը, այսպես կոչված քայաճանեբը, որ պատրաստում էին խալիֆի համար, գործում էին միակտոր, որպես թիկնոցներ, այնպես որ հարկ չէր լինում դրանք ոչ ձևել, ոչ կաբել»³¹, — գրում է արևելագետ Ա. Մեցը: Դրանք պարունակում էին լոկ երկու ունցի (60 գրամ—Մ. Ն.) վուշի թել, մնացածը զուտ ոսկի էր. թիկնոցն արժեք 1000 դինար»³²:

Սայաթ-Նովան իր արվեստի երանգների առարկայացման համար օգտագործել է նաև միակտոր գործված փաշայի խալաթի եզակիությունն ու մեծարժեքությունը: Դրանով նա և՛ հարստացրել է իր շափածոյի գունագեղությունը, և՛ մեզ հաղորդել ջուհակությունից մի սքանչելի նորություն, որը, որքան գիտենք, միայն նրա միջոցով է մտել հայ կյանք:

Ակնիռ ունիմ լալ ու թիլա

Երգչի խաղերում մի քանի անգամ է գործածված լալ ու թիլա կապակցությունը. մի դեպքում՝ իբրև անզուգական հարստության առարկայացում «Գուզիմ՝ ումբըս հենց անց կացնիմ» խաղում³³ ասում է.

Անտակ ծովի միչեն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա:

Մյուս դեպքում՝ սիրուհուն է երգում «Բարիթավուր» խաղով³⁴.

Ջամ-հալիլա,

լալ ու թիլա:

27 Д. Магазаник, *Урф. шр.*, էջ 638.

28 Նույն տեղում, էջ 194:

29 В. В. Радлов, Опыт словаря тюркских наречий, т. I. ч. II, Санкт-Петербург, 1893, стр. 186—187.

30 «Սայաթ-Նովա, 1963», էջ 27:

31 Адам Мейс, Мусульманский ренессанс, М., 1966, стр. 358.

32 Նույն տեղում:

33 «Սայաթ-Նովա, 1963», էջ 27:

34 Նույն տեղում, էջ 13:

Եթե ջամ-հալիլան այն առասպելական հայելին է, որ ցույց է տվել աշխարհի անցյալը, ներկան ու ապագան, ապա լալ ու թիլան էլ այն հազվագյուտ գոհարներին են, որոնք հանվում են «անտակ ծովի միջին»։ Լալը սուտակն է՝ ուրիշը։ Սակայն դա սովորական լալ չէ և բանաստեղծը անտակ ծով ասելով հավանաբար ակնարկում է այն դրավիչ ավանդությունը, որի համաձայն առաջնորդում լալ չկար։ Զեմշետ թագավորի ժամանակ երկրաշարժ եղավ և Պալաշխանի մոտի բարձր լեռը ճեղքվեց և երևաց լալը։ Այլ տեղ չկա այդպիսի լալ, որ ամեն 300 տարին լալ անգամ ի դուրս կուգայ. ապա լալն եօթն գոյն ունի»³⁵։

Սայաթ-Նովան նկատի ունի հենց այդ լալը։ Այդքան հազվագյուտ, այդքան անօրինակ։

Մնում է թիլա և։ Սա՞ ինչ է։ Պատասխանի թելը տվել է Սայաթ-Նովան. «ա կ և ի ր ունիմ լալ ու թիլա»։ Ուրեմն, թիլան գոհար է, ակն է, քանի որ ակնի ունիմ ասելով երգիչը բացահայտում է, թե այդ ի՞նչ ակններ են ու պատասխանում է՝ լալ ու թիլա։ Գ. Ախվերդյանը³⁶, Գ. Լևոնյանը³⁷, Ռ. Աբրահամյանը³⁸ և Ա. Քոչոյանը³⁹ թիլա բառը մեկնել են «ոսկի»։ Մ. Հասարթյանը մեկնել է. «Ոսկի, ոսկեջրած»⁴⁰, սակայն հայտնի է, որ գոհարն առհասարակ չեն ոսկեջրում։

Թիլա բառի ստուգաբանմանը նպաստում է Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», որն ինչպես ցույց ենք տվել մեր մի այլ ուսումնասիրության մեջ, Սայաթ-Նովան օգտագործել է⁴¹։ Այնտեղ թիլա բառը բացատրված է որպես ոսկեքար։ Պատմիչը գրում է. «ոսկե քարն, որ է թիլայ»⁴² և ապա տալիս է քարի հատկությունների ժողովրդական մեկնությունը. «Խասիաթն այն է, որ թէ բարակ շորով փաթաթեն և կայծ դնես ի վերայ՝ չի այրիր շորն. և ով ոք որ ի հետն վերցնէ գիշերավախ և յերազոյ անհոգ կենայ և ի շար պատահմանէ ազատի Աստուծով... Նոյնպէս և դեղին սեյլանն, որ է թիլայ և պիճատի և տպագիրն ասեն... սարդիոնն, որ է սեյլանն»⁴³։

Այլ աղբյուրներ թիլա բառը մեկնում են այսպես. «Թիլա. «մի տեսակ թանկագին քար»։ նորագյուտ բառ. երկու անգամ գտնում եմ գործածված էֆիմ. 249»⁴⁴։ Ստ. Մալխասյանցի կարծիքով թիլա և ոսկեքար բառերը բուրրովին տարբեր իմաստ ունեն։ «Թիլայ—անորոշ տեսակի թանկագին քար»⁴⁵։ Նույնը կրկնված է նաև հայերենի նորագույն բացատրական բառարանում. «Թիլա—թանկագին քարի տեսակ»⁴⁶։

35 «Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցու», Վաղարշապատ, 1896, էջ 599։

36 «Սայաթ-Նովա, 1852», էջ 116։

37 «Սայաթ-Նովա, 1932», էջ 183։

38 «Սայաթ-Նովա, 1943», էջ 186։

39 Ա. Կ. Քոչոյան, նշվ. աշխ., էջ 79։

40 «Սայաթ-Նովա, 1963», էջ 289։

41 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 53—66։

42 Առաքել Դավրիժեցի, էջ 590։

43 Նույն տեղում, էջ 588—590։

44 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1928, էջ 1229։

45 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. II, Երևան, 1944, էջ 106։

46 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 2, Երևան, 1972, էջ 201։

Ինչպես արդեն նկատեցինք, Դավրիժեցու դրբում թիլա բառը բացատրված է որպես ոսկեքար: Ստ. Մալխասյանցը ոսկեքարը բացատրել է բոլորովին այլ կերպ. «Քանկագին քար տուրմալինների կարդից, դեղնագույն կանաչ գույնով, որ շատ բարձր է գնահատվում. ստացվում Յեյլոնից, ուստի և կոչվում է ցեյլոնյան ոսկեքար»⁴⁷, Քարը կոչվում է նաև սեյլան-սարդին, ինչպես կա Դավրիժեցու դրբում, և արդեն բերեցինք: Եթե ուսումնասիրողները ուշադիր լինեն, ապա թիլան կստանար առարկայական մեկնություն և անգին քարն էլ երգչի բառերի բացատրություններում չէր դառնա ոսկի:

О НЕКОТОРЫХ ВЫРАЖЕНИЯХ В ПОЭЗИИ САЯТ-НОВЫ

М. Х. НАРЯН

Резюме

Саятнововедение в течение более одного столетия своего существования сделало многое для литературоведческого и филологического анализа творчества гениального поэта XVIII в.

За последние годы появились также ценные исследования, посвященные философии любви и эстетике Саят-Новы. Однако в песнях поэта остается еще много неясного и спорного.

В статье делается попытка дать новое толкование некоторых выражений поэта.

⁴⁷ Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. III, Երևան, 1944, էջ 569: